# Ալագյազ, Խնկի Ծառ

ժողովրդական

Կոմիտաս



*Ալագյազ* ...

Աղպերն ին ձին թամբել ա,
*Վա՜յ, լե՜,...*
Յարոջ դըռնեն անցել ա:
*Իմ մա՜յրիկ,...*

Յարոջ դըռնեն անցել ա,
*Վա՜յ, լե՜,...*
Ելե դաշտը՝ խաղցել ա:
*Իմ մա՜յրիկ,...*

Ելե դաշտը՝ խաղցել ա:
*Վա՜յ, լե՜,...*
Անձրև եկե, թըրջել ա:
*Իմ մա՜յրիկ,...*

*Խնկի Ծառ* ...

Խնկերին ա բերել բար,
*Գյուլո՜ւմ ջան,*
Իմ խորոտիկ պստիկ յար,
*Գյուլո՜ւմ ջան:*